


## ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԱՎԼՈՒՅՍ ՄԵՇԻՆԻ

Սրբալոյս մեռնի օրինությունը հայ հավատացյալ ժողովրդի սրտին խոսող Ավլիրական արարողություններից մեկն է: Դարեր ամբողջ մեռնը հայ ժողովրդի համար համեմացել է իւղ ցնծութեան, զգեստ լուսառ, սրբութին հոգից և մարմնոց, շնորհ հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զեն հասառոյ, ոգոյ փրկութին, ցնծութին սրտից, ուրախութին յախտենական, լուսառութին մտաց, ճառագայթ հոգից, փարատիչ ցաւոց, պահապան շրթանց, աճեցումն տղայոց, պարարտմն ծերոց, ձեռնադրիչ նոյիրեց և պսակ հաւատացելոց (Կանոն սրբալոյս մեռնի օրինութեան):

Աշնանայն պայծառ, զվարթ և արևաշող օր է: Պատգամավորների, ովատավորների աշխարհախումք բազմությունը, ավելի քան քառասուն հազար հոգի՝ ափյուռքից, հայոց քաղաքամայր Երևանից, մեր հանրապետության զանազան շրջաններից և հարևան եղբայրական հանրապետություններից եկած, հոգեկան մեծ հրճվանքով, ազգային հպատակության քաղցր զգացումներով ներկա եղավ սրբալոյս մեռնի օրինությանը, որը կատարվեց բացօթյա, Մայր տաճարի արևմտյան մասում, զանգակատան առաջ հատուկ պատրաստված թեմի վրա:


Առաջին անգամ այս սուրբ հողի վրա, այս սրբազն մթնոլորտում, հավանաբար 303 թվականին, ս. Գրիգոր Լուսավորիչն էր, որ օրինել էր սրբալոյս մեռնը Արշակունի Տրդատ Գ հայոց արքայի կնքահայրությամբ: Ալ-Յունիւսն, դարերի ընթացքում ս. Լուսավորիչ հաջորդները միշտ օրինել են սրբալոյս մեռնը, որպեսզի երբեք ու երբեք հայ եկեղեցում և հայ հոգիների մեջ «չպակսի ձերթ մաքուր իր կանթելին, հոգիներեն՝ սրբազն հուր»:

Եվ ահա այսօր էլ հայ ովատավորներն աշխարհի բոլոր ծագերից եկել են ս. Էջմիածին ու մայր հայրենիք՝ իդեաց հետ բերելով բյուր կարուտներ,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐչԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ





ԱՐԲԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԿԱՆԻ ՈՐՀԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԿ ՀԱՐԱՍՏԱՑՄԱՆ ՆԵՐԱԿ ԲԱԶՄԻՒԹՅՈՒՆ

համբուլը, երազ ու պաշտամունք, կրոնական և հայրենասիրական հովզ ու ապրում:

Սուրբ Էջմիածինը բոլորին կանչել է իր հովանու ներքո, իր մայրական գորովագութ գիրկը՝ իր մեռունաբույր օրհնությունն ու աղոթքը բաշխելու բովանդակ հայությանը:

Քառասուն օրեր առաջ Մայր Աթոռում սկսվել էր սրբալուս մեռոնի պատրաստությունը: Մեռոնի արծաթաձուլլ մեծ կաթուան, լցված ձիթապտղի անարատ յուղով, բալասանով ու անուշահոտ ծաղիկների յուղով, դրվել էր Սլաք սեղանի առաջ ամենօրյա «աղօթիւր և երգօք հոգևորօք» և ծածկվել «եօթն շղարշովք»:

Սրբալուս մեռոնի օրհնության աղիթով Հայոց Հայրապետի թանկագին ու մտերիմ բարեկամ Բովղարիայի Տ. Մաքսիմ Սրբազն Պատրիարքն ուղարկել էր հարյուր գրամ Վարդի հնատիր և բուրումնավետ յուղ, որն այլ ծաղիկների յուղերի հետ խառնվում է օրհնվելիք մեռոնի մյուս նյութերին:

Եկեղեցական մեծահանդես թափորը սկիզբ առավ Վեհարանից և ձգվեց դեպի Մայր տաճարի առաջ պատրաստված բեմ:

Քահանայապետական լիիվ զգեստավորման մեջ թափորը գլխավորում էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված տ. Եղիշե և տ. Շնորհք սրբազն պատրիարքներով, որոնք նույնաեն հանդիսավոր կերպով զգեստավորված էին իրենց դիրքի և պաշտոնի համաձայն, ինչպես նաև զգեստավորված տասներկու արքեպիսկոպոսներով և եպիսկոպոսներով, որոնք մասնակցելու էին սրբալուս մեռոնի օրհնության արարողությանը:

Թափորին մասնակցում էին հանդիսությունների հրավիրված քույր եկեղեցիների հոգնոր պետերը, այդ թվում՝ Տ. Պիմեն Սրբազն Պատրիարքը, Տ. Դավիթ և Պատրիարք-կաթողիկոսը, Տ. Բասիլիոս Մաք Թումա Մատթեոս Ա. Կաթողիկոսը, Կարդինալ Ժան Վիլբրանդոս և Զերալդ Ալեքսանդր Ելիսոն եպիսկոպոսը:

Մյուս հոգևորականները, պատգամավորներն ու հյուրերը տեղ էին գրավել Հին Վեհարանի առաջ այս առթիվ պատրաստված մասնավոր բեմի վրա:

Թափորի առջևից ընթանում էին կարմրագգեստ, ջլապինդ երկու շաթիրները՝ արծաթագլուխ գավազաններով: Նրանց հետևում էին ջահակիրները: Թափորի կենտրոնական մասում երկու վարդապետներ կրում էին խաչվառն ու հայրապետական գավազանը, իսկ երկու սարկավագներ՝ սուրբ մեռոնի կաթուայի ուկեթել երիգներով բանված սպիտակաթույր շղարշը: Սրանց հետևում էին սրբալուս մեռոնի օրհնության կնքահայրերը՝ Գևորգ Թահիտան (Լոնդոն), Հովհակիմ Մուրադյանը (Նյու-Յորք), Բաֆֆի Պագրճյանը (Փարիզ)՝ երեքն էլ գեղեցիկ շապիկներ հագած:

Այնուհետև թափորին մաս էր կազմում եկեղեցականների դասը, այսինքն՝ զգեստավորված տասներկու արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների շքախումբը՝ մասունքներով, արծաթապատ Ավետարաններով և այլ սրբություններով:

Մեռոնօրհնության ժամանակ, ըստ հայ եկեղեցու ավանդական կարգ ու կանոնի, օգտագործվում են աստվածամուղ սուրբ Գեղարդը, Կենաց սուրբ Փայտը, սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, սուրբ Թադէոս առաքյալի Աջը, սուրբ Բարթողիմեոս առաքյալի Աջը, սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, սուրբ Անդրեաս առաքյալի Աջը, արծաթապատ սուրբ Ավետարաններ, սուրբ մեռոնի մերանը, բալասանի ամոր-սրվակը և այլ սրբություններ:

«Հրաշափառ Աստուած» շարականի վեճ հնչյունների տակ, Տրդատյան կամարակապ դրամ միջով եկեղեցական թափորի շքերթը բարձրանում էր զանգակատան առաջ հարդարված բեմ-սեղանի վրա: Նոյն պահին վեճ ու հաղթական թնդաց «Ուրախ լեր» շարականը, որը հոգեկան անվատում բերկրամքի և խնդրության հույզերով համակեց արարողությանը ներկա հազար-հազար հավատացյալների և ովանական պատուավորների սրտերը:

Արդարն, այսօր որախ է Մայր Աստո և Էջմիածինը՝ «մայր՝ որդուվը բերկրեալ»:

Ամենուրեք լուս, վեհություն ու ցնծություն: Ամենի վրա Հայոց Հայրապետը բազմեց «յարող, և երկոտաան եպիսկոպոսներ կալով շրջապատ առաջի, ունեղով ի ձեռու իրեանց զուոր հաշուն: Կենաց և զԱշ սրբոյ Լուսաւորչին և զնշապու սրբոց և մեռնաշիշ մի լցեան հին մեռնանա» և կատարեց «զիսրիրդածութիւն սրբոյ մեռնի», ըստ սրբալուս մեռնի օրինության կանոնի:

Ապա սրբազան եպիսկոպոսներն Աստվածաշնչից կատարեցին համապատասխան հատվածների ընթերցումներ սուրբ յաղի պատրաստության հոգեոր, մաքրազարդող հշանական պատրաստության մասին Հին և Նոր Կտակարաններուն:

Այնունաև Հայոց Հայրապետուն ընթերցեց մեռնօրինության մեծ աղոթքը. «Արդ՝ զօրութեամբ ամենասուրբ Հոգուոյ եղիցի իւղս այս... զգեստ լուսաւոր, սրբութիւն հոգուց և մարմնոց, պահապան կենաց, զեն հաւատոյ, կինք արդարութեան... ցնծութիւն սրտից... զի որ ոք օծի ի ամանէ, վերստին ծննդեան իւղովս երկիդած լինի յԱստուծոյ և աներկիդ հավառակորդէն...»:

Դարաց դասը, միաբերան և ներդաշնակ, երգեց մեռնօրինության խորհրդին նվիրված մի շարք հոգեից շարականներ: Հայոց Հայրապետուն ապա ընթերցեց մեռնօրինության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները: Այնունաև «իինի բացումն դրան նիւթոյ մեռնի», այսինքն՝ լուսարարապետ տ. Հովհակ եպիսկոպոսը բացեց մեռնի արծաթյան կաթարիչը, մինչ դպիրները ոգևորությամբ երգում էին. «Բացեր, Տէ՛ր, այս օր զգանձր երկնային» շարականը: Նոյն պահին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես կաթարիչ մեջ լցրեց «զնիւթ ծաղկանցն և ապա զբալասանն և զինի զինի մեռնն»՝ ասեղով շարական «Առաքելոյ աղաւնոյ»:

Օրինված հին մեռնի ոսկի շիթերը, արկի ճառագայթների տակ պապուակ, թափվում էին նոր մեռնի մեջ զի լիցի դղրդումն: Նոյն պահին, սունական ու վեճ, հնէեցին Մայր տաճարի զանգերը: Ներկա հավատացյալ ժողովորի և բազմահազար ուխտավորների հոգեստը բերկրանքը հասավ իր գագաթնակետին: Նոյն նվիրական րուսեին Հայոց Հայրապետը Կենաց սուրբ Փեղարդով և ս. Գրիգոր Լուսավորչի Աջով երեք անգամ տյառնագրեց ու խառնեց նոր մեռնը՝ աղոթելով. «Օրինեսից՝ և սրբեցի՝ մեռնն այս հշանաւ...»: Բոլոր սրտերից և հոգիներից միաբերան ու պաղատագին թնդաց՝ «ամէ՛ն, ակեղուիա»-ն, որը, տարածվելով Արարատյան դաշտով մեկ, գնաց հեռո՞ւ հորիզոններ, որպեսզի սովին օծութեամբ զընթիանուի ժողովորդս (հայոց) ադասցես ամրանալ...:

Ապա նորից մեռնի կաթարան ծածկվեց կափարիչով և շղարշով:

Հանդիսադիր Հայրապետն արարողության ավարտին կարդաց վերջին աղոթքը.

«Արդ՝ այժմ և մեք պատրաստելով զաս որպէս կայթն՝ մատուցանեմք զի ամենեքան որ ի ամանէ առնուցուն, արժանի լիցին ընդունել զհատատուն

կերակուր՝ ճշմարիտն, զերկնալինն՝ ի շնորհաց Միածնի քո Տեառն մերոյ Ֆիւսուիք Քրիստոսի... Եւ այժմ ծագեա՛ ի սիրոս մեր զարդարս բարովեան Հոգուոյ սրբոյ, և Բաղրադակից երևեցն՝ զմեզ պարգևաց քոց սրբոց, Վաս-սընզի», Դու իսկ ես Մեռոն անթիծ և մաքուր և անաղարտ որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց:

Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով ալարտվեց սրբալուս մեռոնի օրինության արարողությունը:

Քովր եկեղեցիների հոգեւոր պետերն ու Եկեղեցացուցիչները խոր ուշադրությամբ և Երկրորդածությամբ նեստում էին արարողությանը «Կանոն օրինության սրբալուս մեռոնի»՝ անգերեն թարգմանությամբ, որն այս առթիվ լուս էր տեսել Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի տպարանից գեղատիա հրատարակությամբ:

Հանդիսությանը ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովունի առջնորդներ և եկեղեցու գործերի խորհրդի համագումար Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրայշյանը:

Այժմ քարոզի պահն է: Վեհափառ Հայրապետը խոտում է Իր ներշընչված քարոզներից մեկը՝ օրվա հոգեզմալ հանդիսության տպավորության ներքո՝ վեր հանելով սրբալուս մեռոնի հոգեւոր խորհուրդն ու ազգային մեծ Շահնակությունը մեր ժողովրդի կյանքում:

### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍՐԲԱԼՈՒԹՅԱՆ ՄԵՌՈՒՆԻ

ՕՐՀԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(26 սեպտեմբերի 1976 թ.)

**Յանուն Հօր և Որդու և Հոգուն սրբոյ.**

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնացուք և որախ եղիցուք ի սմա»: Միրելի հավատացյալ ժողովուրդ.

«Այս օրը ինքն Աստված պարզեւեց մեզ, ցնացեք և որախ եղեք»:

Այսօր Մայր Արքո և Էջմիածնի պատմության մեջ մի բացառիկ հանդիսավոր պահն է, որովհետև Աստված զորությամբ և սուրբ Հոգու ներգործությամբ Մենք արժանի եղանք, Մեր հոգեւոր եղբայրների հետ միասին, աղոթելու և աղերսելու, որ աստվածային զորությունը և շնորհները իշնեն այս յուղի մեջ, որ այժմ արդեն սովորական յուղ չէ, այլ՝ մեռոն կամ մյուն ն կամ ինչպես մենք սիրում ենք ասել՝ սրբալուս մյուն ն:

Մյուն ն ը հունարեն բառ է: Նշանակում է անուշահոտ յուղ: Տակավին անհիշելի ժամանակներից ի վեր, Արևելքում մանավանդ, սովորություն կար և նվիրական ավանդություն՝ ձիթենու յուղը օգտագործելու որպես օճառելիք, այն մտածումով, որ այդ յուղի մեջ, որում հաճախ անուշահություններ էին խառնում, իշնում է խորհրդավոր մի զորություն, սրբարար զորություն:

Հին Կտակարանի աշխարհում բազում անգամներ պատմվում է, թե ինչպես օգտագործվել է այդ սրբազն յուղը: Օրինակի համար, Տապանակ ուխտին, որ Խարացելի ժողովրդի Սրբություն Սրբոցն էր, օծվում էր անուշահոտ ձիթենու յուղով: Օծվում էին նաև այն անձինք, որոնք կոչված էին սպասավորելու այդ սրբությունների առաջ, այսինքն՝ հոգևորականները: Բայց նաև նոր Կտակարանում օծման գաղափարը անցել է ուղիղ ճանապարհով և մի քանի անգամներ, հենց մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի կյանքում, օգտագործվել է ձիթենու յուղը իբրև օժանելիք:

Մի պարագա միայն ուզում ենք հիշել այստեղ իբրև վկայություն: Ինքը՝ Հիսոս, տակավին իր հրապարակալին գործունեությունը չսկսած, բայց անմիջապես Հորդանան գետում մկրտվելուց և անապատի փորձությանց շրջայից անցնելուց հետո, եթե զային է իր հայրենի քաղաքը՝ Նազարետ, այնուղետ շրջապատում են նրան բնակիչներից շատեր, հարցուիրուելու են անում, և նա ոգեկոչումի մի պահին, դրաւորելու համար իր աստվածությունը, բացում է ս. Գրիգոր և Կարդում Եսայի մաքարեի այն վկայությունը, թե՝ «Աստուծոն Հոգին իմ վրա է, որովհետոն նա ինձ օճեց»: Այս խոսքը, այս դեպքում, Վերաբերում էր հենց Հիսոսին, որ Աստուծոն Որդին էր՝ առաքված աշխարհ՝ փրկչական առաքելությամբ և որպես օճավը Աստուծոն:

Անհավասիկ, սիրելի հավատացյալներ, թե ինչպես և՛ Հին Ռիստի աշխարհում, և՛ Քրիստոսի Ավետարաններում փառարանվում, մեծարվում, հարգանքի և նույնիսկ պաշտամունքի առարկա է դառնուն ձիթենու յուղը: Այսպես պետք է բացատրել այն մեծ իրողությունը, որ եկեղեցիները բոլոր, գոնե պատմական եկեղեցիները, ընդունեցին այս ավանդությունը ամենայն երկրությամբ, և շրով մկրտվելու հետո՝ սուրբ մեռունի դրոշմով նվիրագործեցին Հին և Նոր Կտակարանների յուղով օժման ավանդությունը:

Հայաստանյաց առաքելական եկեղեցին բացառիկ շուրջով, հանդիսավորությամբ տոնախմբում է մեռունի օրհնության արարողությունը, ինչպես մենք արեցինք այսօր: Մենք, իբրև ձեր Հայրապետոր, հոգեալես անհունորեն միսիթարված ենք, որ դուք, սիրելի զավակներ Մեր, թե՛ մայր երկրից՝ սովորական հայրենիքից և թե՛ արտասահմանի երկրներից, հավաքվել եք հազար-հազարներ, որպեսզի ներկայ գոնվելք այս սուրբ արարողությանը:

Սրբույս մեռունի պատրաստվում է մեզ մոտ բացառիկ ուշադրությամբ ու խնամքով, աղոթքներով և ծիսական արարողություններով: Գիտեք անշոշ, սիրելի հավատացյալներ, թե մեր եկեղեցին մեռունը պատրաստում է հիմնականում ձիթենու յուղից՝ ձիթայուղից, բայց մեջը խառնում է բավականաչափ բաղասան, և նաև քառասուն համեմունքների և ծաղկեների հյութեր, որոնց մեջ կարնոր տեղ են գրավում վարդի յուղը, նարնջի յուղը և ծիրանի յուղը: Մենք այս բոլորը խառնեցինք այսօր այս մեր օրհնած սրբալուս մեռունի մեջ: Ու այսպիսով սրբագործվեց այն: Մենք Վատահ ենք, թե Աստված պիտի ընդունի մեր աղոթքները, մեր ուխտերը, և այս մեռունը իր սրբարար զորությամբ պիտի բաշխվի տարիներ-տարիներ շարունակ հետ այսու, մեր ժողովրդի բոլոր զավակներին, որոնք մկրտությամբ դրոշմվում են սրբալուս մեռունով:

Մեր իշեն ու մայթանքն է, որ հայ ժողովրդի մեջ ոչ մեկը չմնա ճակատը առանց մեռունի:

Մեր ժողովուրդը հավատում է սրբալուս մեռունի սրբարար զորությանը: Մենք էլ հավատում ենք, որ մեռունը սրբացնում է, մաքրում, ազնվացնում մեր մարմինն ու հոգին: Մեր ժողովուրդը հավատում է սրբալուս մեռունի շնորհատու զորությանը, թե սուրբ մեռունի միջնորդությամբ սուրբ Հոգին բաշխում է մեր ազգի զավակներին իր շնորհները, այսինքն՝ լուսը գիտակցության, ճառագայթը հանճարի և առաքինությունները բարոյական, որոնցով զարդարված են մեր ժողովրդի հոգիները տակավին այն օրերից, եթե ս. Գրիգոր Լուսավորիչը, հենց այստեղ երևի, առաջին անգամ սուրբ մեռուն օրինեց, և այդ օրերից սկսեց բաշխվել այն:

Եթե նկատեցիք այսօր, Մենք հատուկ սափորով նոր մեռունի մեջ խառնեցինք նաև հին մեռունից մի մաս: Այդ նշանակում է, որ դա մեջ կար նաև

մի մասնիկ ալն օրհնված մեռոնից, որ սրբացավ և Գրիգոր Լուսավորչի օրհնությամբ և ձեռամբ: Մեր ժողովորդը հավատում է սրբալուս մեռոնի բուժի զորությանը և, այս, Մենք եւ հավատում ենք, որ մեր մարսնի տկարությունները և մանավանդ մեր հոգեկան վերքերը և վշտերը ամոքվում են և մեղմանում, և երբեմն նոյնիսկ բուժվում սրբալուս մեռոնի զորությամբ:

Մեր ժողովորդը հավատում է, և մեր պատմությունն է վկայում է, որ սրբալուս մեռոնը ունի իր մեջ նաև եղբայրարար զորություն, այսինքն՝ թե բոլոր նրանք, ովքեր ընդունում են իրենց ճակատի վրա դրոշմը այս մեռոնի, դառնում են նոյն եկեղեցու, նոյն ազգի անրաժանելի զավակները, և դառնում այսպիսով հարազատ եղբայրներ: Համայն հայ ժողովորդը սուրբ մեռոնվ կազմում է անքակտելի մի եղբայրություն՝ հոգեւոր, մշակութային և ազգային իմաստով: Այս մանավանդ թելադրանքն է և պատգամը մեր բազմադարյան պատմության:

Մեր ժողովորդը հավատում է նաև, վերջապես, սրբալուս մեռոնի խաղաղարար զորությանը: Սուրբ մեռոնի միջոցավ սուրբ Հոգվո շնորհների բաշխումով հայ հավատացյանների հոգիները խաղաղվում են, աճում է սերը և եղբայրական ոգին նոյն ժողովորդի զավակների միջն, և առհասարակ մարդկանց միջն:

Մենք խոսում ենք մեր դարաշրջանում խաղաղության մասին, և ճիշտ ենք անում, որ խոսում ենք ու աղոթում: Աղոթում ենք վասն խաղաղության ամենայն աշխարհի: Բայց պետք չէ մոռանալ, և այդ Հիսուսի Ավետարանն է մեզ թեկալիրում և ուսուցանում, որ ճշմարիտ խաղաղությունը սկիզբ է առնում մարդկանց հոգիներից: Հետևաբար մենք մաղրում ենք, որ այս սուրբ մեռոնվ խաղաղություն իշմի հայ ժողովորդի բոլոր զավակների հոգիների մեջ, և այդ խաղաղության ճառագայթումը տարածվի նաև մեր ազգի սահմաններից այն կողմ, և իրականանա Աստուծո կամքը՝ «Երկիր խաղաղութին, ի մարդիկ հանութին»: Մանավանդ մենք, իրեւ հայ ժողովորդի և եկեղեցու զավակներ, որ անցյալում բազում անգամներ մահվան անդունդի առցև ենք գտնվել, պատերազմի արհավիրքների շրջաններում, ինչպես այդ պատահեց մանավանդ 1915—1916 սև տարիներին, ինչպես այդ պատահեց հերոսական մարտնչումների տարիներին, Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, մայթենք և աղոթենք, որ աշխարհը, ժողովորդները և մարդիկ այս երբեք և երբեք, և ոչ մեկ տեղ չտեսնեն պատերազմներ և արյունահեղություններ, տիրի եղբայրություն և համերաշխ գործակցություն բոլոր ազգերի և բոլոր պետությունների միջն, հերժանկություն բոլորին:

Սիրելի ժողովորդ, այս մայթանքներով Մենք մի անգամ ևս գոհություն ենք մատուցում Աստծուն, որ Մեզ արժանի արեց օրինակու այսօր սուրբ մեռոնը մեր եկեղեցու և մեր ժողովորդի համար: Բոլորի՝ բոլորի՝, որ ներկա եք պատեղ և համայն մեր ժողովորդին՝ օրինություն աստվածային, լուս և շնորհք Հոգվովն սրբ, և սեր ու խաղաղություն Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՃԱՐԱՆՈՒՄ

Սրբալուս մեռոնի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, երգով ու խմելով, բազմահազար ժողովորդի խանդավառ արտօհայտությունների ներք առաջնորդվեց Վեհարան՝ օրվա սունի առթիվ լնդունելու շնորհավորություններ:

Օտար և հայ ողջ հոգեւորականությունը, պատգամավորներն ու հյուրեր, ոլուսավորները և պաշտոնական այլ անձինք տեղ էին գրավել շքեղ գահարաբում:

Սյատեղ ևս ներկա էին պարոն Սարգիս Գևասպարյանը և պարոն Անդրանիկ Հասրաթյանը:

Հանուն հայ եկեղեցու լրության, բովանդակ հայ ժողովրդի, սրբալուս մեռոնի օրինության ուրախ առիթով Հայոց Հայրապետին սրտառուց քարեմաղյություններով շնորհավորեց Արևմտյան Եկեղեցայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովք արքեպիսկոպոսը հետևյալ ուղերձով.

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՈՐԴ Տ. Ս. ՍԵՐՈՎՔԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ԽՈՍՔԸ ԳԱՀԱՄՐԱՋՈՒՄ  
(26 սեպտեմբերի 1976 թ.)**

Աստվածարյալ Հայրապետ,

Այսօրվան պատմական և վեհաշուք սրբալուս մեռոնի օրինության առիվ թույլ տվեք հանուն հայ հոգևոր դասուն, հայ հավատացյալներուն և հանուն ամրող հայ ժողովուրդին, որ ի հայրենին և ի այյուս աշխարհի, սրտառին շնորհավորել Ձեզ և հայտնել ամենուն երախտագիտական զգացումները Ձերդ Ս. Օծության հանդեպ:

Ձեր հայրապետության քանի և մեկ տարիներու ընթացքին Աստված բահատավոր առիթը շնորհեց Ձեզի չորս անգամ կատարելու շնորհաբաշխ սուրբ մեռոնի օրինությունը. բայց այսօրվանը ամենեն պատմական ու մեծաշուքը եղավ, վասն զի ոչ միայն բազմահազար հավատացյալներ համեմավառությամբ, երկրողածությամբ և արցունքու աչքերով հետևեցան այս բացադիկ և հոգեպարար արարողության, այլև անոր մասնակցեցան, նաև պատմական և քույր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնց անունները Դուք արդեն հիշեցիք Ձեր այնքան հոգեշտուն և պերճախոս պատգամին մեջ:

Սուրբ մեռոնի օրինությունը մեր եկեղեցվու ամենեն ժողովրդական և խորհրդավոր արարողությունն է, որ սուրբ Հոգվոյն շնորհմերը կիշտեն և սուրբ մեռոնի միջոցավ կրաշխվին հայ հավատացյալներուն: Ան մեր ժողովուրդի հոգեկան կյանքի ամենեն թանձրացյալ արտահայտություններեն մեկն է, որ ոսկի շղթայով մը մեզ կկապէ մեր անցյալի հավատավոր հայրապետներու ստեղծագործ ոգինն, հայրապետներ, որոնց արժանավոր հաջորդն եք Դուք, և կզորացնե ու կվերապետնե մեր ազգային սրբությունները, մեր քրիստոնեական հավատքը և սերը մեր հոգևոր և մշակութի արժեքներուն:

Կուզեմ վատահեցնել Ձերդ Վեհափառությունը, որ այս պատմական և հիշատակելի օրվան առիվ ամրող հայ ժողովուրդին մտածումներն ու զգացումները կերպնացած են մայր հայրենիքի սիրտին՝ Մայր Աթոռ և Էջմիածնի մեջ կատարվող սրբալուս մեռոնի օրինության և շինարար, ազգաւեր և աստվածարյալ Հայրապետին 20 տարիներու արդյունաշատ գործության շորջ:

Մեր ժողովուրդի պատմությունը ալեկոծ ծովու մը կնմանի, որուն միակ խաղաղ հավահանգիստը եղած է մեր ս. եկեղեցին և անոր հայրապետները,

անոր ոչ միայն հոգևոր, այլ նաև քաղաքական առաջնորդները եղած են անոր դժվարին պայմաններում մեջ: Դուք այ, Վեհափառ Հայրապետ, անոնց արժանավոր հաջորդը, ոչ միայն բացառիկ կերպով այս 20 տարիներու ընթացքին պայծառացուցիք և ծաղկեցուցիք Մայր Աթոռ ս. Էջմիածինը, անոր շրջակա վաճեքերը և բոլոր եկեղեցիները, այլ նաև մեր հավատքին խորհուրդը՝ ս. Էջմիածինը, և ամբողջ մեր ազգային սրբությունները վերակենդանացուցիք, և անոնք վերստին ծնան ամբողջ հայ ժողովուրդի հոգիին և մտքին մեջ: Այսոր համար, Վեհափառ Հայրապետ, մեր ամբողջ ժողովուրդը երախտապարտ է Զերդ Ս. Օծության, որ այս 20 տարիներու ընթացքին ապահով և իմաստուն կերպով դեկապարեցիք-առաջնորդեցիք մեր եկեղեցին և, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանիքին տակ, հովվեցիք և մամիթարեցիք գամոնք, որուն համար ամբողջ հայ ժողովուրդը երախտապարտ է Զեզի: Անեն եկեղեցի, ամեն գաղորդ կարծեք թե մրցունի եղած է ավելի փառավոր կերպով տոնելու, հիշատակելու և սահմանացնելու համար Զեր 20 տարիներու այնամայ արդյունավոր վաստակը:

Հանուն ամբողջին, Վեհափառ Հայրապետ, դարձյալ շնորհակալություն և երախտագիտություն Զեզի, մաղթեղով, որ Աստված տակավին շատ երկար, առողջ կյանք պարգևն Զեզի, որպեսզի ւշապիսի պատմական, համազգային և համանկեղեցական դեաքերով պայծառացներ Մայր Աթոռը, տարածեք քրիստոնեական լուս հավատքը, ի փառ Աստուծոն և ի պայծառություն Հայաստանյաց առաքելական եկեղեցվո և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Այս առթիվ, Վեհափառ Հայրապետ, թույլ տվեք, որ մասնավորապես Բիշեմ, թե ֆրանսահայ գաղորդը ս. մեռոնի օրինության և Զեր գահակալության համեմատվոր առիթով, որոշած է Փարիզի մեջ պատրաստել տալ կողալեն գործ մը ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, հավերժացնելու համար Զեր գահակալության 20-րդ տարեդարձը և այսօրվան սրբալույս մեռոնի օրինությունը: Խսկ Փարիզի մեր ազգայիններեն Մայր Աթոռ ս. Էջմիածնի բարերար և փարիզյան շրջանի Աստվածածին եկեղեցվո բարերար ա: Նուրինան Ֆրենսիյան, ի հիշատակ անցած տարի Զեր այցնության իր դույլակը և իր ընտանեկան դամբարանին օրինության առիթով, իր կողմեն Կնվիրեն, Փարիզի հայ ուկերիչներուն կողմեն պատրաստված, իր և իր ընտանիքին կողմեն իրեն նվեր այս գալագանը, որ այժմ իր խսկ ձեռքով պիտի հանձնեն Զերդ Վեհափառության:

Երկար կյանք և առավել արդյունավետ գործունեություն Զեզ՝ միշտ ի փառ Աստուծոն և ի պայծառություն Հայաստանյաց առաքելական եկեղեցվո և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Համեմատած ավարտին Հայոց Հայրապետը համեն եկավ շնորհակալության և օրինության հետևյալ խորքով.

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ (26 սեպտեմբերի 1976 թ.)

Աստվածային օրինություն ենք համարում այն իրողությունը, որ Մեր գահակալության 21 տարիների ընթացքում ահավասիկ չորրորդ անգամն է, որ կարողացանք Մեր հոգևոր եղբայրների հետ միասին օրինել սրբալույս մեռոնը: Մեր կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է այսօր:

Շնորհակալություն բոլորին: Նախ մեր թույլ եկեղեցիների Հովվապետներին և Աերկայացուցիչներին, մեր մայր եկեղեցու բարձրաստիճան հոգևոր

եղբայրներին, մեր ժողովրդի զավակներին, որոնք շրջապատում են Մեզ այս պահին։ Մենք զգում ենք ճրանց սերն ու հարգանքը դեպի Մայր Աթոռ և Էջմիածինը։

Ենորհակալություն նաև Զեր զգացված, չերմ, եղբայրական խոսքերի և մաղթանքների համար, սիրելի Սերովը սրբազն։ Զեզի հատուկ պերճախոսությամբ Դուք վեր հանեցիք կաֆելորությունը այս պատմական օրվան։

Ենորհակալություն նաև Զեզ, հարգարժան տիար նուրիան Ֆրենկլյան, այս գեղեցիկ հուշանվերի՝ ոսկեզօլուս հայրապետական գավազանի համար, որ պիտի մեա անմոռանալի հիշատակ, դարեր շարունակ, և Մեր ձեռքից այն պիտի փոխանցվի Մեր հաջորդներին, ու այս ձեռվ միշտ պիտի հիշվի Զեր անունը, Ֆրենկլյան պատվական գեղդաստանի անունը։ Թող Աստված լուսավորի հոգիները Զեր բոլոր հնչեցալների։ Աստված երկար կյանք պարզէի Զեզ, Զեր զավակներին և թռռներին, և արժանի անի ձեզ բոլորդ սուրբ Հոգու շնորհներին. Ամեն։

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հայ և օտար հոգևորականության, օրվա հանդիսության առթիվ տրվեց պաշտոնական ճաշկերպույթ։

